

## ՀՀ բանկային համակարգի 2012 թ-ի առաջին եռամսյակի գործունեության ամփոփում

2012 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Այսպես, 5-ից 10 %-ով աճել է տեղաբաշխված վարկերի ծավալը, այդ թվում՝ թե տնտեսությանը և թե ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալը, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված համախառն ավանդների ծավալը, այդ թվում՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների ծավալը, ինչպես նաև ավելացել է բանկերի կողմից մատուցվող ծառայությունների և քանակը և ծավալը:

Հաշվետու եռամսյակում համակարգի բանկերը, բացառությամբ չորս բանկի, եռամսյակը փակել են շահույթով. համակարգի եռամսյակային մաքուր շահույթը կազմել է մոտ 9.4 մլրդ դրամ, իսկ վնասը՝ 0.76 մլրդ դրամ:


### Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2012 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում նվազել են 0.9 %-ով կամ 18.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,055.2 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն ավելացել էին 6.4 %-ով կամ 100.2 մլրդ դրամով: Համեմատության համար նաև նշենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 184.7 մլրդ դրամով կամ 9.8 %-ով:

### Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 5.9 %-ով կամ 79.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 10.3 %-ով կամ 13.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,416.2 և 148.2 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 7.7 %-ով կամ 95.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 10.3 %-ով կամ 12.5 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 8.1 %-ով կամ 81.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 4.2 %-ով կամ 5.0 մլրդ դրամով: 2012-ի մարտի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 68.9 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 66.4 %-ը կամ 940.9 մլրդ դրամ, և այս ցուցանիշն առաջին եռամսյակի ընթացքում աճել է 6.8 %-ով կամ 60.0 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 12.7 %-ի կամ 77.7 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 9.0 %-ով կամ 72.5 մլրդ դրամով:


2012 -ի մարտի 31-ի դրությամբ  
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2012 -ի առաջին եռամսյակի ընթացքում աճել են 7.7 %-ով կամ 29.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 417.7 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 9.0 % կամ 31.9 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ անցած տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 0.5 %-ով կամ 1.6 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 29.5 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել

են 19.0 %-ը կան 268.6 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 8.0 %-ը կան 113.1 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 7.5 %-ով կան 18.9 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 1.4 %-ով կան մոտ 1.5 մլրդ դրամով, ընդ որում՝ անցած տարվա չորրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 10.4 % կան 23.4 մլրդ դրամ և 8.6 % կան 8.8 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2011 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել էր 8.5 % կան 16.6 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 3.2 % կան 2.9 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված աճերի դինամիկան հիմք է տալիս ակնկալելու, որ առաջիկայում ևս բանկային համակարգում կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ:


### Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան



### Պարտավորություններ


2012-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,674.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 26.9 %-ով կան 355.1 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում նվազել է 1.4 %-ով կան 24.6 մլրդ դրամով, իսկ անցած տարվա չորրորդ եռամսյակում այն աճել էր 11.2 %-ով կան 170.8 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 6.8 %-ով կան 38.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 6.7 %-ով կան 33.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 596.7 և 462.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 6.2 % կան 26.9 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 9.0 % կան 11.2 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 9.4 % կան մոտ 19.7 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերը նշված ցուցանիշների աճ էր գրանցվել նաև նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 12.2 %-ով կան 60.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 14.2 %-ով կան 54.1 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 5.5 %-ով կան 6.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 10.5 %-ով կան 47.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 5.5 %-ով կան 10.8 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 14.6 %-ով կան 36.4 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 6.9 %-ով կան 28.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 9.4 %-ով կան 28.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 4.1 %-ով կան 15.0 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները նվազել 3.6 %-ով կան 6.5 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 63.2 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը  
2012 թ.-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




Համակարգում ժամկետային ավանդների  
փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



### Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Ամբ. ցպ. ավանդների    Ֆիզ.անձ. ցպ. ավանդների    Իր. անձ. ցպ. ավանդների  
 ■ 1-եռ. 2011թ.    ■ 2-եռ. 2011թ.    ■ 3-եռ. 2011թ.    ■ 4-եռ. 2011թ.    ■ 1-եռ. 2012թ.

### Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 1.5 %-ով կամ 5.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 380.8 մլրդ դրամ, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ավելացել է 3.9 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա առաջին եռամսյակում ավելացել էր 5.5 %-ով կամ 18.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը հաշվետու եռամսյակում նվազել է 20.5 %-ով կամ 31.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 120.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 31.7 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա առաջին եռամսյակում վերոնշյալ ցուցանիշը նվազել էր 9.5 %-ով կամ 12.3 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում փոփոխություն չի կրել և եռամսյակի վերջում կազմել 233.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 61.4 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ էր գրանցվել ինչպես նախորդ տարվա առաջին եռամսյակում, այնպես էլ չորրորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 3.5 % կամ 7.2 մլրդ դրամ և 3.3 % կամ 7.5 մլրդ դրամ:

### Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



Ընդ. կապիտալի    Կան. կապիտալի    Կուտ. շահույթի  
 ■ 1-եռ. 2011թ.    ■ 2-եռ. 2011թ.    ■ 3-եռ. 2011թ.    ■ 4-եռ. 2011թ.    ■ 1-եռ. 2012թ.

## Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 75.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 64.8 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա առաջին եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 60.2 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 47.6 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ հաշվետու եռամսյակում նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ համակարգում ապահովվել է 1.0 մլրդ դրամի պակաս եկամուտ և կատարվել 3.2 մլրդ դրամի ավել ծախս:


## Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 8.53 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2011 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին զիջում է 2.42 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 11.4 մլրդ դրամի մաքուր շահույթ:

## Ամփոփ ցուցանիշներ

2012.-ի առաջին եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 1.64 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.31 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության նվազում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 1.68 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.35 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2012 թ.-ի մարտի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,  
դրանց աճը/նվազումն առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.  
(մլն դրամ)

Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
	Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համ ա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
				Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/վ նաս	Չբաշ. շահույթ I-եռ.
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
ԱԿԲԱ Բանկ	220453,8	1,4	1	159566,5	3,1	174198,7	0,5	1	35236,4	5,2	46255,1	5,2	1	30000,0	0,0	7270,3	909,8
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	183809,5	2,6	4	121438,0	6,5	151576,4	1,9	4	42741,4	6,7	32233,1	6,3	3	10439,0	0,0	20638,3	1792,2
Արդշինհիմվեստբանկ	158533,8	-1,9	6	107452,5	15,3	127168,0	-2,1	6	44773,6	3,1	31365,8	-1,1	4	15513,6	0,0	11909,0	290,2
ՎՏԲ Հայաստան Բանկ	200658,3	9,9	2	156528,2	16,7	171744,2	13,0	2	41426,3	13,1	28914,1	-5,3	5	13906,2	0,0	11166,4	1080,7
Կոմվերս Բանկ	88572,4	-38,7	10	53724,5	-0,7	71973,1	-43,3	10	22612,5	4,1	16599,3	-4,4	9	4923,3	0,0	7733,6	70,3
Յունիբանկ	124567,6	7,4	7	91409,3	7,6	106262,7	8,1	7	58152,3	8,7	18304,9	3,7	8	11400,7	0,0	7049,5	634,4
Հայէկոնոմբանկ	58827,4	-2,5	14	36806,0	16,9	49615,5	-3,0	14	12346,8	7,1	9211,9	0,0	17	2333,3	0,0	1295,6	-105,7
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	198136,2	-1,6	3	142021,3	0,1	162396,7	-2,4	3	35510,3	4,1	35739,4	1,9	2	25477,3	0,0	10208,7	976,4
Ինեկոբանկ	86018,3	-3,1	11	66631,4	4,1	70130,9	-4,9	11	15042,6	4,0	15887,4	5,9	11	7894,4	0,0	4508,3	891,8
Հայբիզնեսբանկ	160630,3	-4,7	5	111433,4	2,9	137606,3	-5,2	5	47712,6	2,3	23023,9	-1,6	6	17500,0	0,0	5514,9	-34,2
Ամելիք Բանկ	71391,3	-2,8	12	42502,3	4,0	56214,9	-3,1	13	19606,5	6,6	15176,4	-1,8	12	14300,0	0,0	892,7	-515,1
Առէկսիմբանկ	107477,1	12,1	8	83013,6	9,4	91530,7	14,2	8	16539,0	9,3	15946,5	1,5	10	12347,3	0,0	3344,4	235,9
Արգախբանկ	68734,2	1,7	13	51892,2	7,0	57886,9	1,1	12	10324,0	10,9	10847,2	5,4	15	6561,2	0,0	3522,2	562,0
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	102160,4	16,5	9	44855,8	-8,1	89006,8	17,9	9	12899,7	-3,0	13153,7	7,5	13	7148,0	0,0	5474,6	863,2
ԱրմՍլիսԲանկ	45636,4	-5,5	15	25180,8	10,0	34668,0	-8,6	15	3565,9	7,6	10968,4	5,4	14	7002,0	0,0	2680,5	309,2
Զարգ. Հայկական Բանկ	38589,5	6,9	18	27484,3	12,2	30570,4	8,2	17	17937,0	15,4	8019,1	2,2	19	4556,7	0,0	3069,3	250,5
Պրոմեթեյ Բանկ	41424,8	0,2	16	27993,6	9,1	22488,0	-0,4	19	5037,5	1,5	18936,8	0,9	7	14400,0	0,0	4398,2	185,5
Բիբլոս Բանկ Հայաստան	41041,1	8,5	17	31521,2	7,6	32002,5	10,9	16	10104,1	7,1	9038,7	0,8	18	8382,2	0,0	610,4	97,6
ԲՏԱ Բանկ	9827,5	4,5	21	5547,9	14,6	4347,6	10,2	21	1665,0	4,5	5479,9	0,4	20	6520,0	0,0	-1062,5	72,8
Պրոկրեդիտ Բանկ	31451,8	4,0	19	25174,9	0,7	26131,2	5,2	18	8049,4	3,2	5320,6	-1,9	21	6490,0	0,0	-1169,4	-103,3
Մելլաթ Բանկ	17210,7	-34,7	20	4062,9	-60,2	6863,8	-57,3	20	48,8	1,2	10347,0	0,7	16	6850,0	0,0	3265,3	70,1
Ընդամենը	2055152,4	-0,9		1416240,6	5,9	1674383,3	-1,4		461331,7	6,2	380769,2	1,5		233945,2	0,0	112320,3	8534,3